ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (15.01.2024թ.-20.06.2024թ.), ՄԵԿ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ (16.04.2024թ.) ԵՎ ՄԵԿ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (11.07.2024թ.) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման յոթերորդ նստաշրջանի աշխատանքները սկսվել են 2024 թվականի հունվարի 15-ին և ավարտվել հունիսի 20-ին:

Գումարվել է՝

- 8 հերթական,

- 1 արտահերթ նիստ՝ ապրիլի 16-ին՝ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 1 արտահերթ նստաշրջան՝ հուլիսի 11-ին՝ Կառավարության նախաձեռնությամբ:

Ազգային ժողովն ընդունել է 307 օրենք, որից՝

- 5-ը «մայր» օրենքներ են՝ («**Հանրային առողջապահության մասին**», «**Թանգարանների մասին**», «**Կատարողական վարույթի մասին**», «**Մասնագիտական կրթության և ուսուցման մասին**», «**Խաղային գործունեության կարգավորման մասին**»):

- 284՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,

- 18՝ օրենք-համաձայնագրեր:

Այդ ժամանակահատվածի ընդունված օրենքներից 260-ի հեղինակը Կառավարությունն է, 47-ինը՝ Ազգային ժողովի պատգամավորները:

Ընդունված օրենքներից 36-ինը գլխադասային է համարվել Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 19-ինը՝ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը, 2-ինը՝ Արտաքին հարաբերությունների հարցերի մշտական հանձնաժողովը, 14-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 24-ինը՝ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 89-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 11-ինը՝ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, 2-ինը՝ Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 14-ինը՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 75-ինը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը և 20-ինը՝ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովը՝

- **ընտրել է՝**

- Բարձրագույն դատական խորհրդի անդամ (Կարեն Թումանյան),
- Սահմանադրական դատարանի դատավոր (Դավիթ Խաչատուրյան),
- ԱԺ Ֆինանսավարկային և բյուջետային մշտական հանձնաժողովի նախագահ (Ծովինար Վարդանյան),

- Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թեկնածու (Ռուբիկ Մխիթարյան),
- Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի թեկնածու (Արթուր Աթաբեկյան),

- **նշանակել է՝**

- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ (Գարեգին Բաղրամյան),

- Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ (Գեղամ Գևորգյան):

- **որոշմամբ հաստատել է՝**

- Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

- **լսել է և ընդունել է ի գիտություն՝**

- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2023 թվականի գործունեության մասին տարեկան հաղորդումը,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2023 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին» զեկույց,
- Հայաստանի Հանրապետության դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդում,

- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում,
- ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում,
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022-2023 թթ. գործունեության մասին հաղորդում,
- 2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում և Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2023 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույց: